ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվը	«ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/44» «27» նոյեմբերի 2017թ.
2. Պայմանագրի կողմը	«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ (անվանումը)
3. Պայմանագրի առարկան	«Գյումրի» 220 կՎ ՕԳ մետաղական հենարանների ներկման աշխատանքների կատարում (Կապալ)
4. Պայմանագրի գումարը	142200000
5. Պայմանագրի գործողության ժամկետը	220 կՎ ՕԳ-ի անջատման օրվանից 335 աշխատանքային օր
6. Գնումների կատարման ծածկագիրը	ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/44
7. Հայտերի բացման ամսաթիվը	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Տեխնիկական տնօրեն	Լ. Ադամյան	
2.	Վարչական տնօրեն	Ա. Շուշյան	
3.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Հ. Մարգարյան	
4.	Գնումների համակարգող	Ռ. Ալբերտյան	

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԲԷՑ ԲՄԱՇՁԲ-17/44»

ք. Երևան «27» «դեկտեմբեր» 2017թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Ն. Սոդոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Գյումրի» 220 կՎ ՕԳ մետաղական հենարանների ներկման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պատվիրատուն պարտավոր է վճարել Կապալառուին Պայմանագրի հավելված 2-ով սահմանված կարգով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրով տույժը և տուգանքը:

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅԱՍԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են Պայմանագրով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին Պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Կապալառուի կողմից աշխատանքները սկսելու (կատարելու) համար ապահովել համապատասխան հատվածի 220 կՎ ՕԳ-ի անջատումը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի (կամ դրա մի մասի) արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված վարձատրության ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և Պայմանագրով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, պատշաճ որակով՝ Պայմանագրին համապատասխան:

«ԲՍՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

3.4.3 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.4 Պայմանագրով նշված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրով նախատեսված տույժը:

3.4.5 Պայմանագրով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել Պայմանագրով նախատեսված տուգանքը:

3.4.6 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.7 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին և ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.8 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին և ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՅԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է Պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն Պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

2) մինչև սույն կարգով նախատեսված Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 142.200.000 (հարյուր քառասուն երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 23.700.000 (քսաներեք միլիոն

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՅԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ դրա առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների համար՝ Պայմանագրով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա Պայմանագրի N 2 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով:

5.5 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և Պայմանագրով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 1 տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6.8 Կատարվող աշխատանքների համապատասխան հատվածում ՕԳ-ները Պատվիրատուի կողմից անջատված չլինելու դեպքում, Աշխատանքների կատարման

«ԲՍԲՇՐԱՎՈՒՏ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ժամկետը (Հավելված 1) համարվում է կասեցված՝ մինչև համապատասխան հատվածի ՕԳ-ների անջատման օրը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիովին հատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե Պայմանագիրն իրականացվում է ենթակապալի Պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

8.10 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զոր. Անդրանիկի 1	Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ	Դպրոցականների փ. 13 ա, բն. 16
Հ/Հ 1150001172630300	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01522459	Հ/Հ 11500257094970
	ՀՎՀՀ 02648403
_____ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____ Ն. ՍՈՂՈՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հավելված N 1
«27» նոյեմբերի 2017թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԲԷՑ.ԲՄԱՇՁԲ-17/44» գնման պայմանագրի

«Գյումրի» 220կվ օդային գծերի մետաղական հենարանների ներկման աշխատանքներ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Գինը ներառյալ բոլոր տոկոսները	Գումար /հազար դրամ/
1	4,059 տն քաշով 30,0մ բարձությամբ П21М-1 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	28,413	86,616	2461,0062
		հատ	7	0,000	0
2	4,008 տն քաշով 30,0մ բարձությամբ П21М 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	372,744	86,615	32285,2216
		հատ	93	0,000	0
3	4,519 տն քաշով 35,6մ բարձությամբ 220կվ П21М +5.6 ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	4,519	86,614	391,408666
		հատ	1	0,000	0
4	6,449 տն քաշով 42,2մ բարձությամբ П27М 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	12,898	86,616	1117,16672
		հատ	2	0,000	0

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՍԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

5	9,0 տն քաշով 46,0մ բարձությամբ П27М -2+3,8 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	54,00	86,616	4677,237
		հատ	6	0,000	0
6	9,0 տն քաշով 30,0մ բարձությամբ П27М+3,8 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	18,00	86,616	1559,079
		հատ	2	0,000	0
7	4,698 տն քաշով 35,8մ բարձությամբ П220-3 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	65,77	86,616	5696,87467
		հատ	14	0,000	0
8	5,86 տն քաշով 40,8մ բարձությամբ П220-3+5 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	5,86	86,616	507,56976
		հատ	1	0,000	0
9	3,429 տն քաշով 35,0մ բարձությամբ П220-5 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	17,15	86,616	1485,02275
		հատ	5	0,000	0
10	4,056 տն քաշով 35,8մ բարձությամբ ПС220-3 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	28,392	86,616	2459,18728

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

		հատ	7	0,000	0
11	5,86տն քաշով 40,8մ բարձությամբ ПС220-3НС+5 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	5,860	86,616	507,56683
		հատ	1	0,000	0
12	6,226տն քաշով 31,5մ բարձությամբ ПУ30М 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	6,226	86,616	539,268103
		հատ	1	0,000	0
13	8,438տն քաշով 42,2մ բարձությամբ ПУ32М 220կվ ՕԳ-ի մետաղական միջանկյալ - անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	16,876	86,616	1461,72318
		հատ	2	0,000	0
14	8,609տն քաշով 25,1մ բարձությամբ У220-1 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	25,827	86,616	2237,01852
		հատ	3	0,000	0
15	11,078տն քաշով 30,1մ բարձությամբ У220-1+5 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	121,858	86,616	10554,7916
		հատ	11	0,000	0

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

16	12,587տն քաշով 34,1մ բարձությամբ У220-1+9 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /այլումեե փոշիյով/	տն	75,522	86,616	6541,37579
		հատ	6	0,000	0
17	16,563տն քաշով 39,1մ բարձությամբ У220-1+14 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /այլումեե փոշիյով/	տն	49,689	86,616	4303,83758
		հատ	3	0,000	0
18	6,807տն քաշով 20,8մ բարձությամբ У33М-1 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /այլումեե փոշիյով/	տն	34,035	86,616	2947,95854
		հատ	5	0,000	0
19	11,967տն քաշով 30,2մ բարձությամբ У33М 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /այլումեե փոշիյով/	տն	227,373	86,616	19694,0261
		հատ	19	0,000	0
20	17,449տն քաշով 35,8մ բարձությամբ У33М+5 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /այլումեե փոշիյով/	տն	52,347	86,616	4534,06158
		հատ	3	0,000	0

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

21	6,899տն քաշով 24,8մ բարձությամբ У36М-1 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	13,798	86,616	1195,12067
		հատ	2	0,000	0
22	18,931տն քաշով 40,2մ բարձությամբ У38М 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	37,862	86,616	3279,43606
		հատ	2	0,000	0
23	24,513տն քաշով 45,2մ բարձությամբ У38М+5 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	24,513	86,616	2123,20575
		հատ	1	0,000	0
24	2,469տն քաշով У220-1+5 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի տակդիրի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	14,814	86,616	1283,12202
		հատ	6	0,000	0
25	3,994տն քաշով У220-3+9 220կվ ՕԳ-ի մետաղական խարիսխային-անկյունակային հենարանի տակդիրի ներկում լաքավ 2 անգամ մաքրելով ժանգից /ալյումեե փոշիյով/	տն	3,994	86,616	345,942307
		հատ	1	0,000	0

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

26	Նյութական միջոցների բեռնում, բեռնաթափում և տեղափոխում ասֆալտե ճանապարհով 120կմ մինչև պահեստ	տն	30,00	18,680	560,4
27	Նյութական միջոցների բեռնում, բեռնաթափում և տեղափոխում գրունտային ճանապարհով 100կմ պահեստից մինչև նշակետ	տն	30,00	124,798	3743,94
	Ընդամենը				118500
	ԱԱՀ 20%				23700
	Ընդամենը				**142200,00**

Այլ պայմաններ

Աշխատանքներն իրականացվում են բաց տարածքում, մինչև 40մ բարձրության վրա քամու առկայության պայմաններում: Աշխատանքների իրականացման ժամանակ մեկուսիչների շարանների ներկվելը բացառել: Լաքով ներկելուց առաջ հենարանի մետաղական կոնստրուկցիաները մաքրել հին ներկից:	
Աշխատանքների կատարման վայրը	**«Գյումրի» 220կվ օդային գծերի** մետաղական հենարաններ

Աշխատանքների կատարման ժամկետը	
Սկիզբը	**Ավարտը**
220կՎ ՕԳ-ի անջատման օրվանից	335 աշխատանքային օր

Պատվիրատու

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Զոր. Անդրանիկի 1

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ

Հ/Հ 11500001172630300

ՀՎՀՀ 01522459

_____ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ստորագրություն)

Կապալառու

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր,

Դպրոցականների փ. 13 ա, բն. 16

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 11500257094970

ՀՎՀՀ 02648403

_____ Ն. ՍՈՂՈՅԱՆ

(ստորագրություն)

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հավելված թիվ 2
«27» նոյեմբերի 20 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԲԷՑ ԲՄԱՇՁԲ-17/44» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երկկողմ ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշվված 90 աշխատանքային օր

Պատվիրատու

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զոր. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

Կապալառու

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր,
Դպրոցականների փ. 13 ա, բն. 16
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Ն. ՍՈՂՈՅԱՆ
(ստորագրություն)

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հավելված թիվ 3
<<_____>>_____20 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **«ԲԷՅ.ԲՄԱՇՁԲ-17/44»** *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ